# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**10 նոյեմբերի 2021 թվականի N 465-Ա**

**«ՍԻՍԻԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպու-թյունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռ. Այվազյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռաֆայել Այվազյանին՝ 2021 թվականի նոյեմբերի 13-ից 20-ը ներառյալ տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. Արձակուրդի ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական գծով տնօրենի տեղակալ Հովսեփ Անդրեասյանին:

10.11.2021

X [signature]

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 10
ք. Կապան